# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներով ու նորմերով,

հիմնվելով Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում ռազմական համագործակցության ոլորտի միջազգային պայմանագրերի վրա,

ելնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերում որպես կառավարման տեխնիկական հիմքի կարեւորագույն բաղկացուցիչներ հանդիսացող կապի համակարգերի երաշխավորված եւ արդյունավետ գործառության ապահովմանն ուղղված ջանքերի միավորման անհրաժեշտությունից,

**համաձայնեցին ներքոնշյալի մասին**.

### Հոդված 1

Սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի միջեւ փոխգործակցությունը զարգացնելու նպատակով Կողմերն ստեղծում են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի Կապի համատեղ (միավորված) համակարգ (այսուհետ՝ Կապի համատեղ (միավորված) համակարգ):

Կապի համատեղ (միավորված) համակարգի մեջ մտնում են սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կապի ուժերն ու միջոցները (ուժերի եւ միջոցների մի մասը), որոնք կիրառվում են ըստ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմակերպման եւ

փոխգործակցության համաձայնեցված պլանի (այսուհետ՝ Պլան) եւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմակերպման եւ զարգացման գլխավոր սխեմային (այսուհետ՝ Գլխավոր սխեմա) համապատասխան եւ կատարում են սույն համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված խնդիրները:

Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմակերպչատեխնիկական կառուցվածքի ձեւավորման, դրա կազմության եւ գործառության սկզբունքները սահմանվում են Անկախ Պետությունների Համագործակցության կառավարությունների ղեկավարների խորհրդի կողմից հաստատվող համապատասխան հիմնադրույթով:

**Հոդված 2**

Սույն համաձայնագրի իրագործման գծով Կողմերի լիազորված մարմիններն են սույն համաձայնագրի մասնակից պետությունների պաշտպանության նախարարությունները (պաշտպանական գերատեսչությունները):

**Հոդված 3**

Կապի համատեղ (միավորված) համակարգը գործում է (զարգանում է) կառավարման ապահովման նպատակով՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կապի համակարգերի, կապի պետական ցանցերի առկա ռեսուրսի առավել ամբողջական եւ արդյունավետ օգտագործումը:

Կապի համատեղ (միավորված) համակարգը լուծում է հետեւյալ հիմնական խնդիրները.

սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կառավարման համակարգում եւ զինված ուժերի միջեւ կապի պահանջվող ծառայությունների տրամադրում եւ տեղեկատվության բոլոր տեսակների փոխանակման ապահովում,

Անկախ Պետությունների Համագործակցության ձեւաչափով ստեղծված՝ ռազմական ոլորտում փոխգործակցության միավորված համակարգերի գործառության ապահովում,

սույն համաձայնագրի մասնակից պետությունների ընդհանուր օգտագործման կապի ազգային ցանցերի եւ հատուկ նշանակության կապի ցանցերի հետ կապին, անհրաժեշտ համատեղելիությանը ներկայացվող պահանջների կատարման ապահովում:

**Հոդված 4**

Կապի համատեղ (միավորված) համակարգի գործառության ապահովման նպատակներով Կողմերի լիազորված մարմինները կարող են օգտագործել սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կապի ցանցերի ռեսուրսները՝ սույն համաձայնագրի մասնակից պետությունների այն նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, որոնցով կարգավորվում են պաշտպանության եւ անվտանգության ապահովման կարիքների համար կապի ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները:

**Հոդված 5**

Կապի համատեղ (միավորված) համակարգի ստեղծմանը, գործառությանն ու զարգացմանն ուղղված Կողմերի ջանքերի համակարգումն իրականացնում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհուրդը՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդին առընթեր՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի պետերի համակարգման կոմիտեի (այսուհետ՝ Համակարգման կոմիտե) միջոցով:

Համակարգման կոմիտեի նախագահը Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի կապի գլխավոր վարչության պետն է:

Որպես Համակարգման կոմիտեի անդամներ՝ դրա կազմի մեջ են մտնում

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի (զինված ուժերի) գլխավոր շտաբների կապի գլխավոր վարչությունների (կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության, կապի եւ կառավարման ավտոմատացված համակարգերի վարչության, կապի վարչության, կապի դեպարտամենտի) պետերը, ինչպես նաեւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի որոշմամբ՝ Համակարգման կոմիտեի նախագահի տեղակալը եւ այլ պաշտոնատար անձինք:

«Համակարգման կոմիտեի մասին» հիմնադրույթը հաստատվում է Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի կողմից:

**Հոդված 6**

Կապի համատեղ (միավորված) համակարգի կայուն գործառության եւ Համակարգման կոմիտեի համապատասխան որոշումների կատարումն ապահովելու նպատակով ստեղծվում է առանձին ստորաբաժանում՝ Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի գլխավոր շտաբի կապի կառավարման 32-րդ կետի կազմում (այսուհետ՝ 32-րդ ԿԿԿ) բաժին՝ Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի կապի գլխավոր վարչության կապի զորքերի (կենտրոնական ենթակայության) թվաքանակի սահմաններում:

Նշված բաժնի մասին հիմնադրույթը, այդ թվում՝ դրա կազմը (թվաքանակը), կառուցվածքը եւ գործունեության կազմակերպումը հաստատվում են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի կողմից՝ Համակարգման կոմիտեի նախագահի ներկայացմամբ:

**Հոդված 7**

Կողմերը սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կառուցման (զարգացման) միջոցառումների կատարման շրջանակներում Կապի

համատեղ (միավորված) համակարգի համաձայնեցված զարգացումն ապահովելու նպատակով իրականացնում են Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմի մեջ մտնող ուժերի եւ միջոցների (ուժերի եւ միջոցների մի մասի) համալրումը կապի ժամանակակից (հեռանկարային) միջոցներով (տեխնիկայով)՝ Պլանի եւ Գլխավոր սխեմայի համաձայն առաջնահերթ կարգով, ռազմական եւ ռազմատեխնիկական միասնական քաղաքականության իրականացման ապահովման խնդիրների լուծման ժամանակ ղեկավարվելով հետեւյալ նպատակներով.

ռազմական կապի համակարգերի, համալիրների եւ միջոցների զարգացման հաջորդականության ապահովում՝ դրանց արդիականացման եւ սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի գիտատեխնիկական արտադրանքի պաշարի իրացման հիման վրա,

սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի սպառազինությունը կազմող ազգային եւ արտասահմանյան արտադրության կապի միջոցների եւ համալիրների համատեղելիության ապահովում,

կապի միջոցների եւ համալիրների միասնականացում ու ստանդարտացում,

նորմատիվ իրավական բազայի, այդ թվում՝ ֆինանսավորման եւ համակողմանի ապահովման կայուն մեխանիզմի (կարգի) ձեւավորում եւ կատարելագործում՝ ելնելով համատեղ խնդիրների լուծման ժամանակ Կապի համատեղ (միավորված) համակարգի գործառության եւ զարգացման շահերից,

սույն համաձայնագրի մասնակից պետությունների գոյություն ունեցող ու նորաստեղծ կապի տարրերի եւ կապի պետական ցանցերի օգտագործման վրա հիմնված՝ սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի արդյունավետ կիրառման ապահովում:

**Հոդված 8**

Կողմերը լիազորված մարմինների միջոցով ապահովում են Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմից զորքերի (ուժերի եւ միջոցների) մշտական

մարտական պատրաստությունը, փոխգործակցությունը եւ Համակարգման կոմիտեի կողմից մշակվող Պլանին համապատասխան կապին առնչվող համատեղ խնդիրների կատարման ժամանակ դրանց գործողությունները՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կապի պլանները եւ կապի զորքերի կիրառումը:

Պլանը եւ Գլխավոր սխեման հաստատվում են Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների պաշտպանության նախարարների խորհրդի կողմից:

Կապի համատեղ (միավորված) համակարգի կազմից կապի ուժերի եւ միջոցների կառավարումն իրականացնում են համապատասխան պաշտոնատար անձինք՝ սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան:

**Հոդված 9**

Կապի համատեղ (միավորված) համակարգի ուժերի եւ միջոցների գործողությունների օպերատիվ համակարգումը, այդ թվում՝ սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի կապի եւ համատեղ միջոցառումների գծով վարժանքների անցկացման ընթացքում, իրականացնում է 32-րդ ԿԿԿ-ն:

**Հոդված 10**

Պլանի հիման վրա Կապի համատեղ (միավորված) համակարգի ուժերի եւ միջոցների մի մասն իրականացնում է մշտական հերթապահություն (մարտական հերթապահություն): Այդպիսի ուժերի եւ միջոցների կազմը որոշվում է սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:

Մշտական հերթապահություն (մարտական հերթապահություն) ապահովող՝ Կապի համատեղ (միավորված) համակարգի ուժերի եւ միջոցների կառավարումն իրականացվում է սույն համաձայնագրի մասնակից պետությունների զինված ուժերի հրամանատարական կետերից (կապի կառավարման կետերից

(կենտրոններից)), իսկ դրանց գործողությունների համակարգումը՝ 32-րդ ԿԿԿ-ից:

**Հոդված 11**

Կապի համատեղ (միավորված) համակարգի գործառության եւ զարգացման ապահովման շահերից ելնելով՝ կապի ռազմական տեխնիկայի (գույքի) մատակարարումը, կապի ռազմական տեխնիկայի նորոգումը, կապի աշխատանքների կատարումը եւ ծառայությունների մատուցումն իրականացվում են Կողմերի երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

**Հոդված 12**

Կապի համատեղ (միավորված) համակարգի ազգային համակարգերի (հատվածների) գործառության ու զարգացման ֆինանսավորումը եւ Կապի համատեղ (միավորված) համակարգի համատեղ միջոցառումների ապահովումն իրականացվում են սույն համաձայնագրի մասնակից պետությունների բյուջեներով Կողմերի լիազորված մարմինների համար նախատեսված միջոցների հաշվին:

**Հոդված 13**

Սույն համաձայնագիրն իրագործելու նպատակով Կողմերի լիազորված մարմինները կարող են փոխանակել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվությունը:

Ռազմագիտական, ռազմատեխնիկական եւ ռազմաիրավական տեղեկատվության, ինչպես նաեւ սույն համաձայնագրի մասնակից պետությունների սպառազինման մեջ եղած սպառազինության եւ ռազմական տեխնիկայի վերաբերյալ տեխնիկական ու վերանորոգման փաստաթղթերի փոխանակման մեխանիզմն ու պայմանները, Կապի համատեղ (միավորված) համակարգի կառուցման շահերից բխող գիտահետազոտական, փորձարարակոնստրուկտորական եւ այլ աշխատանքների համատեղ կատարումը կարգավորվում են առանձին համաձայնագրերով:

## Հոդված 14

Տեղեկատվության փոխանցումը եւ դրա պաշտպանությունն իրականացվում են սույն համաձայնագրի մասնակից պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Միջպետական գաղտնիքներին առնչվելն ու դրանց պաշտպանությունն իրականացվում են Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում գործող՝ գաղտնի տեղեկատվության պաշտպանության մասին միջազգային պայմանագրերին համապատասխան եւ սույն համաձայնագրի մասնակից պետությունների՝ գաղտնի տեղեկատվության (պետական գաղտնիքների) փոխադարձ պաշտպանության (պահպանության) մասին երկկողմ պայմանագրերով:

Կողմերը երրորդ կողմին չեն փոխանցում սույն համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունն առանց այդ տեղեկատվությունը տրամադրած Կողմի գրավոր համաձայնության:

Սույն համաձայնագրի իրագործման ընթացքում Կողմերից մեկի ստացած տեղեկատվությունն այդ Կողմը չի կարող օգտագործել ի վնաս այլ Կողմերի շահերի:

## Հոդված 15

Կապի համատեղ (միավորված) համակարգի զորքերի (ուժերի եւ միջոցների) համար ռազմական մասնագետների ուսուցումն իրականացվում է Կողմերի երկկողմ համաձայնագրերի հիման վրա:

## Հոդված 16

Կողմերի համաձայնությամբ՝ սույն համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրությամբ:

## Հոդված 17

Սույն համաձայնագրի կիրառման եւ մեկնաբանման ընթացքում Կողմերի միջեւ ծագող վիճելի հարցերը կարգավորվում են Կողմերի խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

## Հոդված 18

Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերն այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Ներպետական ընթացակարգերն ավելի ուշ կատարած Կողմերի համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան փաստաթղթերն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

## Հոդված 19

Սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության միանալու համար՝ միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին փոխանցելու միջոցով: Միացած պետության համար սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում միանալու մասին փաստաթուղթն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

## Հոդված 20

Սույն համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի դուրս գալու սույն համաձայնագրից՝ դուրս գալուց ոչ ուշ, քան վեց ամիս առաջ ավանդապահին ուղարկելով իր այդ մտադրության մասին գրավոր ծանուցում եւ կարգավորելով Համաձայնագրի գործողության ընթացքում առաջացած ֆինանսական եւ այլ

պարտավորություններ:

Կատարված է 2020 թվականի մայիսի 29-ին, ռուսերենով: Սույն համաձայնագիրը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր կոմիտեում, որը սույն համաձայնագիրն ստորագրած յուրաքանչյուր պետություն կուղարկի դրա հաստատված պատճենը:

**Ադրբեջանի Հանրապետության կառավարության կողմից՝**

———————

**Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Մ. Գրիգորյան**

**Բելառուսի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Ս. Ռումաս**

**Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Ա. Մամին**

**Ղրղզստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Է. Ասրանդիեւ**

**Մոլդովայի Հանրապետության կառավարության կողմից՝**

———————

**Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից՝**

**Մ. Միշուստին**

**Տաջիկստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

**Կ. Ռասուլզոդա**

**Թուրքմենստանի կառավարության կողմից ՝**

———————

**Ուզբեկստանի Հանրապետության կառավարության կողմից՝**

———————

**Ուկրաինայի կառավարության կողմից՝**

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2020 թվականի մայիսի 29-ին ստորագրված «Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների զինված ուժերի կապի համատեղ (միավորված) համակարգի մասին» Համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**